

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. ՍԵՒԵԱՆԻ

XIV

Բագւայ դերասանական խմբի ներկայացումները.—Ի՞նչ խաղանք.—Տ. Ա. Չմշկեանի 35-ամեակը,—Նախուէօն Ամստունի.—Բագւայ ապագայ խումբը.—Ճանապարհորդ դերասաններ:

Բագւայ հայ դերասանական խմբի ներկայացումները շարունակւեցին մինչև ավեմ հերուեալ կարգով, ավերաքննիչ»-ից էետու ներկայացւեցին՝ «Նշթա-ներ».—«Մայրական սէր», «Վերաքննիչ», «Խանդոր», «Դարբնոցապետ»՝ «Նէլոկ»—«Զարլէի մօրաքուրը», «Քանդած օջախ», «Թագի համար», «Բաղրամար»—«Բաղրամար աշբար», «Բոոր Թէրեզա», «Թագի համար», «Ննջարան-վա-գոնների քոնդրուեօրը», «Ձանդոր», «Մէդէա», «Մարիանա», «Թագի համար», «Բին», «0թէլլօ»—«Երջանկութիւնը խալաւ անկիւնում», «Ուրիէլ Ակոստա», «Պարիզի աշքարներ», «Մարի Ստիւարտ»:

Ուժ արդէն մօտիկ է հայ թատրոնի գաղափարը, ով գնահատում է մայրենի բնմը, նա չէ կարող չուրախաճալ դեսնելով թէ ինչպէս զաւառ-ներում գտնուու ինորէլիզէնու երիտասարդներ և զելեցիկ սեռի ներկայա-ցուցիչներ զանազան բարենպատակ հիմնարկութիւնների օգտին հրպիսի եռանդով ներկայացումներ ևն կազմակերպում, բայց դժբաղդաբար նոցա ամեն քալափոխը խուժերի է հանդիպում, շար չաճախ չարմար պիէսներ չունենալով, Դրանից առաջ է զալիս հետեւեալ երկու անդարձարութիւնը, 1. թատերասէրները երիար ժամանակ դէս ու դէն են ընկնում մի պիէս ընտրելու համար, և ընտրելուց էլ կրկին զանազան ներ, ո թիւնների ևնթարկում ընտրած ձեռք բնիւրու համար՝ որ շար չաճախ անլաջողու-թեամբ է պասկում, 2. Չգտնելով իրանց ցանկացածը նրանք ընդունու-են չարմար թէ անդարձար մի տպած պիէս—որպիսիների թիւը շար սահ-

մանափակ է—և կամ մի ձեռագիրը՝ որի բաշտը շար ուսրբերութիւն չունի ուսկած պիեսի բաշտից, այսինքն այդ մինուն զաւառական քալաքում շատ և շատ անգամներ խաղացւելով կորցրել է հետաքրքրութիւնը։ Այսուեւ էլ գլխաւորաբար ուստում է հասարակութիւնը, որը սովորում է լուել շարունակ «հին երգ»-ը և փոխանակ բաւականութիւն սրանալու ձանձրանակ։

Երկու ուսրի առաջ գորնւելով մեր զաւառական փոքրիկ քաշաքներից մէկում, զարմանքով դեսակ որ սիրողները «երկանքին ու լանքին» չափելոց ինու որոշել են և Դերերը բաժանել խաղալու համար... Ժօրժ Օնէի «Դարբնոցապետ» գալոնի դրաման։

—Գուցէ սխալ հասկացաւ, «Դարբնոցապետ» անունով դրամայի մասն է Զեր խօսքը, հարցրի խօսս կցիս։

—Այն, «Դարբնոցապետը», այն որ ուստում է...

—Բայց ինչպէս բաժանեցիք Դերերը. ովքեր են խաղում,

—Ես Ֆիլիպպի Դերն եմ խաղում, օր. Ն. Խաղում է Կլարա, պ. Ա. Օկուա... և թեւց ամբողջ զործող անձինքը։

—Եւ ինչպէս են գնում Զեր կրկնութիւնները, հարցրի բոլորովին ապշած։

—Օ՛, հիանալի. մէկ ամիս է արդէն փորձում ենք. ամենքս էլ Դերերնիս անգիր գիտենք։

—Դերերի անգիր գիտենալը պիեսի աջութեան զրաւական չէ կարող լինել. օրինակի համար Վլարա խաղացող օրիորդը Զեր Վ., քաշաքից դուրս չէ եկել—որքան ինձ լազոնի է—ուրեմն ինչպէս պիտի ներկաւացնէ այդ Պարիզի արխսորկրադրուութ Դերը...։

—Ճիշտ է, քիչ դժւար է, բայց չք որ ձեզ ասացի թէ պիեսը ուզպած է. իսկ մենք ուրիշ պիես չ'կարողացանք դանել...

Դաւառական թափերասէրների վիճակը ընթերցողին աւելի կենդանի ներկաւացնելու համար էր, որ մէջ բերի շատերից այս մի օրինակը. ես չեմ մելադրում նրանց անխորհնուրդ քաղը. մարդիկը ուզում են մի զործ կարարել, մրտնում են մի ծանր լուծի տակ. ընդրում են ուղարձը..։ «Դարբնապետ»։

Բայց հայ թագրոնը ունի բնական հարուար րէպէրուար, որի մէջ ամեն ուեսակ ուժի լարմարուղ զանազան պիեսներ կան. լաւ չէր լինի որոշած ժամանակին լեռ սրանալու պայմանով իւր պիեսներով օգնութեան հասնէին գաւառացի անշահախնդիր թափերասէրներին. միենոյն ժամանակ ուէր լինէր թագրոնի գլուխ կանգնող մարմինը մի տեղ հասցնելու այն բոլոր պիեսները, որոնք ուսնեակ հազարներ են նսդել հասարակութեան, և թագրոնի լեկավարների թուլութեան և անհոգութեան չնորդիւ ալաօր հայ թագրոնի գրաւարանը դառարկ է, իսկ միջի մեծար-

ժէք գուշը զանազան թարրոնական միջներ ամենալին պաշտպահութեամբ աւարել և վրան հանգիստ նստել են: Անդարբերութիւնը, «իմ ինչիս է հարկաւոր», «ինչու եմ վարամարդ դառնում»-ը միջն մեր ոսկորների ծուծն է հասած: Այս Հայախոր ինչպէս մեր ամեն հասարակական գործում —ի մասնաւորի և թարերականում—նեխում, փրում (դանգրէն) է միայն առաջացնում:

Տէր-Դաւթեանի և Ա.մ. Մանդինեանի լոբէկաններից լեզու հերթը հասաւ Տ. Սաթենիկ Զմշկեանին որի բեմ դուրս գալու օրից արդէն անցել էր 35- դարիներ, անա ալդ էին տօնում այս տարւակ Ցունւարի 14-ին չարգելի տիկնոջ համակրողները: Ալդ տօնախմբութեան կարարող կոմիտէտը թափրոնի բոլոր գումարները ցրւել էր, վալորոք, այնպէս որ թափրոնը լի էր ծալրէ ի ծայր Չնակելով որ չարգելի տիկնոջ քաշւած է բեմից, ալեռուամենակնիւ երբեմն մասնակցում է զլիսաւորաբար թափրոնակիների ներկայացումներին, իսկ նրա աշխարհանքը գնահատում է աւելի նրանով որ նրա բեմ դուրս եկած միջոցին հայ բեմը համարեա մի անմատչելի ասպարէզ էր հայ կնոջ համար, բաւականաչափ հողեկան ովֆ, գոկունութիւնն էր հարկաւոր շրջապատող խաւարի բամբասանքն անփես առնելու համար, 60-ական և 70-ական երկար ու ձիգ տարիներում հայ բեմի վրա մշտագեղործող կանացի ուժը եւել է Տ. Ա. Զմշկեան,

Տ. Սաթենիկ իւր տօնախմբութեան առիթով արժանացաւ հասարակութեան զանազան դասակարգերի կողմից եռանդուն համակրական ցոչցերի: Սրացւեցին ուղերձներ Պետքերուրգի, Մոսկվաի և Խարկովի ուսանութութիւնների կողմից, ուղերձներ Բագւակ և Ֆիլիլսի դերասաններից, նոյնը ուսւա և վրաց խմբերից, նաև պատկեր գերովիշեալ դերասանական խըմբերից, մի թանգարին ընծակ Մոսկվաից, բաղմաթիւ չորհաւորական հեռագիրներ ամէն կողմերից և ալլն:

Փետրւարի 12-ին Թիֆլիսում վախճանւեց լաւոնի թափրոնական գործիչ Նապոլէոն Ամարունին: Հանգուցեալը նախազան էր հայ բեմի վերածնութեան տարիները՝ 1879, 1880 և 1881 թւականներում գործող մասնաժողովի և հիմնադիրը «թափրոնական Ակումբի» որ մեր բնածին անդարբերութեան չնորհիւ չ'արժանացաւ լուս դեսնելու Առաջմ մենք աւելորդ ենք համարում նրա գործունէութիւնը քննութեան ենթարկել — ալդ թողնում ենք ուրիշ անգամւալ, միայն ալսքանը կասենք որ մասմաք նրա ջանքերի արդիւնքն էր որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը առիթ ունեցաւ ծանօթանալու այնպիսի դաշտանդների հեր՝ որպիսին

Էին Պ. Աշամեան, Մ. Մնակեան, Վերժինի Գարաքաչ, Սիրանով, Հրաչեալ և Ասուղիկ, անուններ՝ մէկը միւսից շքեւ, մէկը միւսից փալուն,

Բագւայ հայ դերասանական ընկերութիւնը եօթն ամիս անընդհարիւր ներկազացումները Բագւում շարունակելուց էրոտի փակեց իւր գործունէութիւնը՝ 1899—1900 թագերաշրջանին նոր եռանդով սկսելու համար Հայ բեմը իւր գործիւնից ի վեր (գուցէ չընաշելով Կ. Պոլսի «Արևելեան թատրոնի փառաւոր ոսկեդարը») դժւար թէ ունենար մի աշխախից նիւթական չաջողութեան, Ակնչալունի երեսում էր որ ժուղվուրդը սիրո կապաւած է թագրոնի հետ եղան մի շարք ներկազացումներ ուր շար շատեր կամ դժւարաւ ձեռք բերին դոմսակ և կամ խսպառ զրկւեցին: Խոկ բննէ-ֆիմներին բոլոր տեղերի գիները թաճացրած լինելով դարձեալ դժւարաւ էր դոմսակ ձեռք բերում: Մինուն ժամանակ պէտք է սպասել որ երկու դարւայ փորձառութիւնից էրոտի թագրոնի զեկավարները բաւականաշափ փորձառութիւն ձեռք բերին թէ խումբը և թէ բէպէրտուարը կանոնաւոր կազմակերպելու ու ներքին: Վարչական խնդիրներում անպիսի մի ուղղութիւն մոցնելու՝ որ որքան հնար է նուազ բարդութիւններ լինի անպիսի մի ընդանիքում՝ որի անունն է «Դերասանական խումբ»: Մինուն ժամանակ աւելորդ չենք համարում մի քանի կէտերի վրայ թատրոնի վարիչների ուշադրութիւնը դարձնելու:

1. Որոշ իրաւունքներ դալ բէժիսորին:

2. Դերասանութան խմբի անդամներից հասրադել «ընկերական դատարան» և ամէն մի բարդ խնդիր նրան չանձնել, որի վճիռը ընդունելի պիտի լինի խմբի ամէն մի անդամին:

3. Մեր «Մուրքի» էջերում շար չաճախ կրկնած խնդիրը գոնէ ալս անզամ ինկատի առնել, այն է թարդմանական պիէսների անմարսելի լեզուն հարթել կոկել և մի օրինակութեան վերածել և ալդ գործը չը չանձնել պարագական անձնաւորութիւնների:

8. Տ. Ս. Սիրանով, Զարէլ և Քալանթարեան, պ.պ. Արաքսեան, Պետրոսեան, վրոլի, Աշամեան ընկերակցութեամբ գնալու են Ալէքսանդրապոլ և Կարս ներկազացումներ դալու, խոկ Տ. փառանձէմ օր. օր. վարդիթեր, Մարի, պ.պ. Ալիխանեան, Մտեփանեան, Օհանիան, Մէլիք-Յովհէփեան գնում են ներկազացումներ դալու դէպի Երևան, Յանկանում ենք չաջութիւն: